

Ս. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Է. Գ. ՄԱԼԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԼԻՉԵԴԻԱՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ
ՍԱԴՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պղինձ-կոլեղանային հանքավայրերի ծագման մասին պատկերացումների դարձացման պատմությունը սերտորեն կապված է օգտակար հանածոների ուսմունքի պատմության հետ, որը իրեն երկրարանական ինքնուրույն դիտություն ձևավորվեց XIX դարի երկրորդ կեսում: Բայց մինչ այդ, դեռևս հնում մարդիկ որոշ պատկերացումներ ունեին հանքային մարմինների ձևի, տեղաբարձրման պայմանների և նրանց ծագման վերաբերյալ:

Հնագույն ժամանակներից ի վեր մեծ է եղել հետաքրքրությունը կրակի և ջրի գործունեության նկատմամբ. դրանով է մարդն աշխատել բացատրել բնության մեջ կատարվող շատ փոփոխությունները: Հին հույները, մասնավորապես Արիստոտելը և նրա հետնորդները, միներալների առաջացումը դիտում էին իրեն կրակի և ջրի՝ բնության այս երկու հզոր տարրերի, գործունեության արդյունք:

Հույներից հետո, ընդհուպ մինչև XVI դարը, միներալների ծագման վերաբերյալ գրեթե ոչ մի նոր միտք չի արտահայտվում:

XVI դարում Գ. Ազրիկոլան այն կարծիքն է հայտնում, թե հանքարեր երակները երկրակեղենում առաջացած ճեղքվածքներ են, որոնք հետագայում լցվում են ընդերքից բարձրացող շրային տաք լուծույթներով:

Ավելի ուշ՝ XVII դարի կեսերին, Գեկարտը, ամփոփելով Հանքային լեռների վերաբերյալ կուտակված տվյալները, եկավ այն եղբակացության, որ երկրի վրա հանդիպող հանքային նյութերը արդյունք են երկրի կենտրոնում գտնվող տաք մետաղային միջուկից դուրս ժայթքող գաղերի նստեցման:

Հանքառաջացման տեսության բնագավառում XVIII դարի կեսերին լայն ընդհանրացումներ է արել ոռու գիտնական Մ. Վ. Լոմոնոսովը:

Նրա կարծիքով, հանքային երակները ճեղքվածքներում ջրային տաք լուծույթների նստեցման հետևանքով առաջացած գոյացումներ են, որոնք հանքային նյութը ստանում են շրջապատող ապարների քայլայումից: Հանքային երակների առաջացման մասին այս կարծիքը լիովին ձևավորվեց միայն 100 տարի հետո, Զանդրերգերի աշխատություններում: Այսպես էր գրությունը հանքառաջացման տեսության բնագավառում մինչև 1800-ական թվականները:

Կոլլեգանային հանքավայրերի ծագման վերաբերյալ տեսակետների բախումները սկսվեցին վերջին հարյուրամյակում: Արտահայտվել են ամենածայրահեղ կարծիքներ, սկսած հանքավայրերի մագմատոգեն բնույթից և վերջացրած նրանց նստվածքային ծագմամբ:

Արդեն 1800-ական թվականների կեսերին առաջ է քաշվում մի հիպոթեզ, ըստ որի, պղինձ-կոլլեգանային հանքավայրերի առաջացումը կապված է մագմայի և նրանից անջատված գազերի հետ: Այս կարծիքը արագորեն տարածվում է աշխարհով մեկ, և հետազոտողների մեծ մասը գալիս է այն եղրակացության, որ բոլոր պղինձ-կոլլեգանային հանքավայրերը, այդ թվում նաև Հայաստանի և ընդհանրապես Կովկասի հանքավայրերը, ունեն մագմատիկ ծագում: Հայաստանում այս կարծիքի ամենաշերտ պաշտպանն էր Ա. Էրնը¹: Նրա համոզմամբ, Ղափանի հանքավայրը առաջացել է հիմքային մագմայից, որը երկրի մակերեւութիւն արտահայտված է դիարազային դայկաներով, իսկ սրանք հանքանյութի ու էմանացիաների կրողներն են:

Հանքայնացման կազը մագմատիկ ապարների հետ երկար ժամանակ տիրապետող էր, սակայն, այդ տեսակետի պաշտպաններն ամեն ինչում չեն, որ համակարծիք էին: Մի շարք հետազոտողներ, ինչպես Ա. Էրնը, այն դիտում էին որպես հիմքային մագմայի արդյունք: Հետագայում Հայաստանի պղինձ-կոլլեգանային հանքավայրերի վերաբերյալ նման կարծիք հայտնել է նաև Ա. Լ. Դոդինը: Սակայն հետազոտողների զգալի մասը հանգում

¹ А. Эрн, Отчет об исследовании Катар-Кавартского месторождения медных руд Зангезурского уезда Елисаветпольской губернии, Материалы для геологии Кавказа, кн. 9, сер. III, 1910.

է այն հղրակացության, որ պղինձ-կոլշեղանային հանքավայրերը կապված են թթու կազմի մագմայի կամ սրանց ածանցյալների հետ:

XX դարի սկզբներին Ա. Բետմանը ուսումնասիրելով Ռիո-Տիուոյի հանքավայրը, նրան և այդ տիպի հանքավայրերի դդալի մասին վերագրում է հիդրոթերմալ ծագման: Հիմնավորապես Ռիո-Տիուոյն հիդրոթերմալ հանքավայրերի կարգին է դասվել ավելի ուշ՝ 1941 թ. Հ. Շնեյդերհոնի կողմից: Հայաստանում պղինձ-կոլշեղանային հանքավայրերի ծագման վերաբերյալ նույնական արտահայտվել են այդ ժամանակի համար յուրահատուկ առաջադիմ մաֆեր Արդեն մեր դարի սկզբներին Հայաստանի հանքավայրերի առաջացումը բացատրում էին մագմայից անջատված էմանացիաների և լուծույթների նստեցմամբ. այսինքն՝ դրանց վերագրում էին հիդրոթերմալ ծագում: Այս տեսակետը հետազայում Ուրալի և Հայաստանի հանքավայրերի օրինակով համապատասխանաբար հաստատեցին Դ. Ֆ. Մուրաշովը և Վ. Գ. Գրուշենյոր:

1930-ական թվականներին Վ. Գ. Գրուշենյոր Ալավերդու, Շամլուտի և Ախթալայի պղինձ-կոլշեղանային հանքավայրերի ծագումը բացատրում է դրանք կապելով Թումանյանի շրջանում տարածված գրանիտիդային ինտրուզիաների հետ: Իսկ Ղափանում Ա. Էրնի կողմից դիտված դիարազային դայկաները Վ. Գ. Գրուշենյոր գիտում է, որպես Մելլրու ոլլուտոնի լամպրոֆիբրային ածանցյալներ: Ղափանի հանքավայրի ծագման վերաբերյալ նույն կարծիքին էր նաև Վ. Ե. Կոտլյարը, սակայն արդեն 1950-ական թվականներին նա փոխում է իր կարծիքը: 1940-ական թվականներին այս կարծիքին (հանքայնացման կապը գրանիտոիդային ինտրուզիաների հետ) են միանում նաև Բ. Ս. Վարդապետյանը և Ս. Ս. Մկրտչյանը:

Սակայն պղինձ-կոլշեղանային հանքավայրերի ծագման վերաբերյալ նման տեսակետն ուներ նաև խոցելի կողմեր: Այսպես, հանքայնացումը երբեմն կապվում էր չմերկացած ինտրուզիվ դանդաղածների հետ, և այդ կապը լինում էր պայմանական, առանց կոնկրետ միջավայրի: Եթե հանքավայրերի մոտակայքում գտնվում էին նույն դարաշրջանի ինտրուզիվ դանդաղածներ, ապա հանքայնացումը կապվում էր դրանց հետ, իսկ եթե այդպիսիները բացակայում էին, ապա հանքայնացումը գենետիկորեն կապվում էր երկրի մակերեսում մերկացած թթու կազմի դայկաների հետ,

ըստ որում, վերջիններս դիտվում էին որպես ինտրուզիաների ապոֆիզներ: Գենետիկական տեսակետից այդպիսի վիճելի հանքավայրերի շարքն էին դասվում նաև Շամլուղի և Ղափանի հանքավայրերը:

Հիդրոթերմալ ծագման հանքավայրերն ուսումնասիրելիս, երկրաբանները հիմնականում հիմնվում էին այն տեսությունների և հիպոթեզների վրա, որոնք մշակվել էին Հանքային լեռների, Կորդիլիերների, Կորնուելոյի և այլ հանքավայրերի ուսումնասիրության հիման վրա:

Մեր դարի 30-ական թվականներին Վ. Էմմոնսը², առաջ է քաշում, այսպես կոչված, բաթոլիտային տեսությունը: Նա տալիս է հանքավայրերի ծագման 16 երակային գոտիներ, որոնք կոնցենտրիկ կերպով դասավորված են հանքաբեր բաթոլիտների շուրջը: Ըստ Վ. Էմմոնսի, ինտրուզիվ զանգվածից հեռանալիս, իշխում է նաև միներալների առաջացման ջերմաստիճանը, և ստացվում է աստիճանական անցում բարձրջերմաստիճանային միներալային ասոցիացիաներից դեպի ցածրը: Ի դեպ պետք է նշել, որ Հայաստանում այս տեսության ջերմ պաշտպանն է Բ. Ս. Վարդապետյանը, որը Ղափանի հանքավայրի ծագումը վերագրել է Մեղրու ինտրուզիայի հանքային գոտիականությանը, նրան ավելի մոտ տեղադրելով Քաջարանի բարձրջերմաստիճանային մոլիբդենային հանքավայրը, իսկ ավելի հեռու՝ Ղափանի ցածրջերմաստիճանային պղնձի հանքավայրը: Հետագայում Հ. Ս. Ստեփանյանը զարգացնելով հանքավայրերի առաջացման այս տեսությունը, այն դնում է գեոքիմիական հիմքի վրա:

Հետագայում մեծ նշանակություն ունեցան սովետական ականավոր գիտնական Ս. Ս. Սմիրնովի ուսումնասիրությունները³, որ նա խիստ քննադատական վերլուծության ենթարկեց էմմոնսի բաթոլիտային տեսությունը:


Ակադեմիկոս Ս. Ս. Սմիրնովի ուսումնասիրությունները բերեցին այն ենթադրության, որ տարրեր հանքային ֆորմացիաները դասավորված լինելով մի ինտրուզիվ մարմնի շուրջը, գոյացել են ոչ թե նույն լուծույթներից, ինչպես ու ենթադրում

² В. Эммонс, О механизме образования некоторых систем металлоносных рудных жил, связанных с гранитными батолитами. Сб. «Геология рудных месторождений западных штатов США», М.—Л., ОНТИ, 1937.

³ С. С. Смирнов, К вопросу о зональности рудных месторождений, Изв. АН СССР, сер. геол. наук, № 6, 1937.

էր վ. Էմմոնսը, այլ տարրեր լուծույթներից, որոնք ստացվում են մետաղատար օջախից, սակայն տարրեր ժամանակաշրջաններում:

Ս. Ս. Սմիրնովի գաղափարները⁴ հետազայտմ լայն դարձացում ստացան սովորական երկրաբանների ուսումնասիրություն-



Դիպուրէտիկ սղախ

Սառչող մագմատիկ օշախի շուրջը տարածված լիմենաների համակենտրոն դասավորությունը բայց Ա. Ե. Ֆերսմանի (Հյուսիսային Հայաստանի պայմանների օրինակով ըստ Հ. Ս. Սահմանանի):

Ներում, ուր ցույց տրվեց, որ իրոք հիդրոթերմալ լուծույթները գենետիկորեն կապված են ինտրուզիվ զանգվածների հետ, սակայն այդ կապը շատ ավելի բարդ և բազմազան է, քան մենք ենթադրում ենք: Ցու Ա. Բիլիբինը, Մ. Բ. Բորոդուխայան և ուրիշները ապացուցեցին, որ հիդրոթերմալ լուծույթները կարող են առաջանալ ոչ միայն խոշոր ինտրուզիվ զանգվածներից, այլև, այսպես կոչված, փոքր ինտրուզիաներից:

Պղինձ-կոլցեղանային հանքավայրերի ուսումնասիրման հաջորդ կարևոր փուլը կապված է ակադ. Ա. Ն. Զավարյակով⁵ անվան

⁴ С. С. Смирнов, О современном состоянии теории образования магматических рудных месторождений. Зап. ВМО, вып. 1, ч. 76, 1947.

⁵ А. Н. Заваряцкий, О генезисе колчеданных месторождений, Изв. АН СССР, сер. геол. наук, № 3, 1943.

Հետ: Ուսումնասիրելով Ուրալի կոլեգանային հանքավայրերը, նա եկավ այն եզրակացության, որ պղինձ-կոլեգանային հանքավայրերը կապված են հրաբխածին շերտերի հետ, ըստ որում, հանքայնացման աղբյուրը նա «տեղավորում է» հրաբխածին գոյացումների օջախներում, որոնք կարող են ընդհանուր լինել ինտրուզիվ օջախների հետ, կազմելով մի միասնական մագմատիկ ավազան:

Մի փոքր ուշ, այս միտքը Հայաստանի պայմաններում զարգացնում է Հ. Գ. Մաղաքյանը, Թումանյանի շրջանի պղինձ-կոլեգանային հանքավայրերին վերագրելով հրաբխածին ծագում:

Ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հետազոտողները մեծ տեղ են տալիս այս տեսակետին, սակայն կայացածքանավեճերում հետազոտողներին ավելի շատ գրավում էր պրոբլեմի ոլինել-վինելու հարցը, քան նրա քննարկումն ըստ էության: Դրա պատճառը հիմնականում այն էր, որ գեռևս իշխում էր գրանիտոիդների և հանքայնացման կապի գաղափարը, և հրաբխային ֆորմացիաները խորը չեին ուսումնասիրված: Սակայն հետազոտողները նորանոր փաստերի հիման վրա ապացուցում են պղինձ-կոլեգանային հանքավայրերի կապը հրաբխածին գոյացումների հետ: Այս գաղափարը վերջին երկու տասնամյակում զարգացում է ստացել սովետական գիտնականներ Վ. Ի. Սմիրնովի, Գ. Ս. Չոծենիձեի և Վ. Ն. Կոտլյարի կողմից, որոնք 1972 թ. այդ ուսումնաբի զարգացման և նոր հանքավայրեր գտնելու համար արժանացան լենինյան մրցանակի:

Միության տարրեր վայրերում այս տեսությունը հաստատվում է Գ. Ս. Վլասովի, Մ. Ա. Ֆավորսկայայի, Մ. Գ. Ռուբրի (Հեռավոր Արևելք), Ի. Վ. Լուչիցկու, Գ. Մ. Ֆրեմդի (Միջին Ասիա), Մ. Ա. Կաշկայի (Աղրբեջան), Ն. Ս. Սկրիպչենկոյի (Հյուսիսային Կովկաս) կողմից: Հայաստանում հիշյալ տեսությունը զարգացնում են Հ. Գ. Մաղաքյանը, Է. Գ. Մալխասյանը, Է. Ա. Խաչատրյանը, Գ. Հ. Փիջյանը: Այս ուսումնասիրությունները հանգեցրին այն եզրակացության, որ հանրապետության պղինձ-կոլեգանային հանքավայրերն իրենց ծագումով կապված են յուրայի հասակի թթու կազմի մերձհրաբխային գոյացումների հետ: Երկրաբանական այլևայլ հանգամանքներից զատ, Ղափանի հանքավայրը, գտնվելով այլ տեկտոնա-մագմատիկական գոտում, չէր կարող ծագել Մեղրու գրանիտոիդային պլուտոնից: Սա հաստատվում է հիմնականում հրաբխածին շրջաններում հանքայնացման և հրա-

բրիսականության կապի՝ ժամանակակից մեթոդների վրա հիմնված հետազոտությունների արդյունքներով:

Այս գաղափարի զարգացումը զգալի դեր խաղաց հրարիսածին ֆորմացիաներում նոր հանքավայրեր հայտնաբերելու ուղղությամբ, որոնց պոտենցիալ հնարավորությունները երկար ժամանակ հաշվի չեն առնվազ:

Սակայն չի կարելի մխանել նաև գրանիտիդային ինտրուզիաների դերը պղինձ-կոլզեղանային հանքայնացման գործում: Հանքավայրերի ծագումը և հասակը որոշելու համար յուրաքանչյուր առաձին դեպքում պետք է ձեռքի տակ ունենալ բազմակողմանի երկրաբանական փաստական նյութ:

Ուրախալի է նշել, որ պղինձ-կոլզեղանային հանքավայրերի ծագման հարցը լուծելիս զգալի ներդրում ունեն նաև հայ երկրաբանները:

С. С. МКРТЧЯН, Э. Г. МАЛХАСЯН

ИСТОРИЯ РАЗВИТИЯ ГЕНЕТИЧЕСКИХ ПРЕДСТАВЛЕНИЙ О МЕДНОКОЛЧЕДАННЫХ МЕСТОРОЖДЕНИЯХ АРМЕНИИ

Резюме

В статье освещается развитие взглядов на происхождение медно-колчеданных месторождений Армении, привлекающих внимание исследователей на протяжении многих десятилетий.

По этой проблеме существовали и продолжают существовать представления о магматическом, осадочном и гидротермальном происхождении указанных месторождений.

В настоящее время большинство исследователей предпочтение отдают взглядам о гидротермальном происхождении колчеданных руд. Однако в вопросе об источнике оруденения мнения расходятся. Сложность и многообразие появления колчеданных месторождений исключает возможность единства взглядов об их генезисе.